Ձեր Պահանջ Դիմումի Վերաբերյալ Կայացված Որոշումը Հետաքննելու Ձեր Իրավունքը

Բովանդակություն

Ե՞րբ բողոքարկել՝	2
Ինչպե՞ս բողոքարկել՝	2
Ներկայացուցչության Ձեր իրավունքը՝	2
Կրկնակի վերանայում՝	3
Լսում՝	3
Վերաքննիչ Խորհուրդի վերանայում՝	4
Դաշնային դատարան՝	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Սոցիալական Ապահովությունը ցանկանում է վստահ լինել, որ Դուք ստանում եք այն Սոցիալական Ապահովության նպաստները, որոնց համար իրավասու եք: Մենք ամենայն ուշադրությամբ դիտարկում ենք Ձեր գործով առկա ողջ տեղեկատվությունը՝ նախքան Ձեր նպաստների իրավասության կամ ստանալու ենթակա գումարի վերաբերյալ որևէ որոշում կայացնելը: Մեր որոշման հետ Ձեր անհամաձայնության դեպքում, Դուք կարող եք բողոքարկել այն: Դա նշանակում է, որ Դուք կարող եք Ձեր գործը կրկին վերանայելու խնդրանք ներկայացնել մեզ: Երբ Դուք վերանայման խնդրանք եք ներկայացնում, ապա մենք վերանույում ենք որոշումը ամբողջությամբ, և ոչ միայն Ձեր անհամաձնությանը արժանացած հատվածը: Եթե մենք սխալ որոշում ենք կայացրել, ապա մենք կփոխենք այն:

Գոյություն ունի բողոքարկման 4 մակարդակ: Եթե Ձեզ չի բավարարում մի մակարդակում կայացրած որոշումը, ապա Դուք կարող եք բողոքարկել այն հաջորդ մակարդակում:

Մակարդակները հետևյալն են՝

- Կրկնակի վերանայում;
- Լսում;
- Վերաքննիչ Խորհրդի վերանայում, և
- Դաշնային դատարան:

Ե՞րբ բողոքարկել՝

Բողոքարկում ներկայացնելու համար, կարևոր է հասկանալ, թե ինչ ժամանակահատվածում կարող եք դա անել: Բողոքարկման հայց ներկայացնելու համար Դուք ունեք 60 օր՝ մեր որոշման վերաբերյալ Ձեզ ուղարկված նամակը ստանալու օրվանից սկսած: Մենք ընդունում ենք, որ Դուք ստացել եք նամակը նրա ուղարկման ամսաթվից հինգ օր անց, եթե Դուք մեզ ցույց չտաք այն ավելի ուշ ստանալու ապացույց:

Եթե Դուք չեք բողոքարկում 60-օրյա ժամկետում, ապա Դուք կարող եք կորցնել Ձեր բողոքարկելու իրավունքը, և մեր կողմից ընդունված վերջին որոշումը կարող է վերջնական լինել: Օրինակ, եթե Դուք չեք ներկայացնում կրկին վերանայման խնդրանք 60 օրվա ընթացքում, ապա Դուք կարող եք կորցնել Ձեր գործը վերանայելու Ձեր իրավունքը:

Եթե Դուք ունեք Ձեր գործը սահմանված ժամանակահատվածում չբողոքարկելու լավ պատճառաբանություն, ապա մենք կարող ենք Ձեզ լրացուցիչ ժամանակ տրամադրել: Լրացուցիչ ժամանակ տրամադրելու խնդրանքը պետք է մեզ ներկայացնեք գրավոր կարգով՝ ներկայացնելով հետաձգման պատճառները:

Եթե բողոքարկելու վերջին օրը համընկնում է շաբաթ և կիրակի օրերի հետ կամ որևէ ազգային տոնի հետ, ապա դիմելու վերջին օրը տեղափոխվում է հաջորդ աշխատանքային օրվա վրա:

Ինչպե՞ս բողոքարկել՝

Դուք պետք է Ձեր բողոքարկման հայցը ներկայացնեք գրավոր: Դուք կարող եք զանգահարել մեզ և խնդրել բողոքարկման ձևաթուղթը կամ ուղարկել մեզ ստորագրված գրություն՝ Ձեր Սոցիալական Ապահովության համարով՝ հաստատելով Ձեր գործով որոշումը բողոքարկելու Ձեր ցանկությունը: Եթե Դուք դիմել եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստի համար, և Ձեր դիմումը մերժվել է, ապա Ձեր որոշումը բողոքարկելու ամենաարագ և ամենահեշտ միջոցը դա մեր ***www.socialsecurity.gov/disability/appeal*** կայքէջը այցելելն է: Դուք կարող եք առցանց բեռնել փաստաթղթերը, որոնք կուղեկցեն Ձեր բողոքին, ինչի շնորհիվ կկրճատեք ժամանակը, որը անհրաժեշտ է Սոցիալական Ապահովությունից որոշումը ստանալու համար:

Եթե Դուք բնակվում եք ԱՄՆ-ի սահմաններից դուրս, Դուք նույնպես կարող եք առցանց բողոքարկել Սոցիալական Ապահովության հաշմանդամության վերաբերյալ Ձեր որոշումը:

Ներկայացուցչության Ձեր իրավունքը՝

Դուք կարող եք ընտրել որևէ մեկին, ով կօգնի Ձեզ բողոքարկման հարցում կամ հանդես կգա որպես Ձեր ներկայացուցիչ: Ձեր ներկայացուցիչը կարող է լինել իրավաբան կամ որևէ որակավորված անձ, ով ծանոթ է Ձեր և Սոցիալական Ապահովության ծրագրի հետ: Մենք կաշխատենք Ձեր ներկայացուցչի հետ, ինչպես որ աշխտելիս կլինեինք Ձեզ հետ: Ձեր ներկայացուցիչը կարող է Ձեր անունից հանդես գալ Սոցիալական Ապահովության հիմնական հարցերում և ստանալ որոշման պատճեները, որոնք մենք կայացնում ենք Ձեր դիմումի վերաբերյալ:

Ձեր ներկայացուցիչը չի կարող Ձեզանից որևէ վճար գանձել, առանց առաջին հերթին Սոցիալական Ապահովության գրավոր հավանությունը ստանալու: Ներկայացուցիչ ունենալու վերաբրեյալ լրացուցիչ տեղեկատվության համար ծանոթացեք Ներկայացուցչության Ձեր Իրավունքը (*Your Right To Representation)* տեղեկագրին (Հրատարակություն թիվ 05-10075), որը հասանելի է նաև առցանց մեր կայքում՝ ***www.socialsecurity.gov***:

Կրկնակի վերանայում՝

Կրկնակի վերանայումը՝ դա Ձեր դիմում պահանջի ամբողջական վերանայումն է, Սոցիալական Ապահովության որևէ պատասխանատու անձի (կամ նահանգային Հաշմանդամության Որոշման Ծառայությունների (Disability Determination Services) կողմից, եթե բողոքարկում եք հաշմանդամության որոշում) կողմից, ով չի մասնակցել առաջին որոշումը ընդունելու գործընթացում: Մենք կդիտարկենք սկզբնական որոշման ժամանակ ներկայացված բոլոր փաստարկները, գումարած որևէ նոր փաստարկներ:

Ձեր գործի կրկնակի վերանայման վերաբերյալ որոշում կայացնելիս՝ մենք Ձեզ նամակ կուղարկենք մեր որոշման մեկնաբանությամբ:

Լսում՝

Եթե Դուք չեք համաձայնվում մեր կրկնակի վերանայման որոշման հետ, ապա Դուք կարող եք դատական լսում խնդրել: Լսումը կիրականացվի վարչարարական հարցերով դատավորի կողմից, ով որևէ մասնակցություն չի ունեցել սկզբնական որոշման ընդունման, ինչպես նաև Ձեր գործի կրկնակի վերանայման մեջ:

Լսումը սովորաբար տեղի է ունենում Ձեր տանից 75 մղոն հեռավորության սահմաններում: Վարչարարական հարցերով դատավորը, Ձեզ կծանուցի լսման օրվա և վայրի մասին:

Նախքան լսումը, մենք կարող ենք Ձեզանից լրացուցիչ փաստարկներ պահանջել և ճշտել Ձեր դիմում պահանջի վերաբերյալ տեղեկատվությունը: Դուք կարող եք դիտարկել Ձեր գործով ներկայացված տեղեկատվությունը, և տրամադրել նոր տեղեկատվություն:

Լսման ընթացքում Վարչարարական հարցերով դատավորը կքննի Ձեզ և Ձեր կողմից ներայացված որևէ վկայի:

Այլ վկաներ, ինչպիսիք են բժշկական կամ մասնագիտական փորձագետները, նույնպես կարող են մեզ տեղեկատվություն տրամադրել լսման ժամանակ: Դուք կամ Ձեր ներկայացուցիչը կարող եք քննել վկաներին:

Որոշ դեպքերում, մենք կարող ենք վարել Ձեր լսումը տեսաձայնագրվող հեռակոնֆերանսի միջոցով, քան առերես: Մենք Ձեզ այդ դեպքում նախապես կտեղեկացնենք լսման ժամանակը: Տեսաձայնագրվող լսման դեպքում, մենք կարող ենք ընդհանուր լսումը ավելի հարմարավետ դարձնել Ձեզ համար: Հաճախ, տեսաձայնագրվող լսումը կարող է ավելի արագ նշանակվել, քան առերես հանդիպումը: Ինչպես նաև տեսաձայնագրվող լսման վայրը կարող է ավելի մոտ լինել Ձեր տանից: Այդ հանգամանքը կարող է ավելի հեշտացնել որևէ վկայի կամ ներկայացուցչի Ձեզ ուղեկցելը:

Սովորաբար Ձեր օգտին է լսմանը ներկայանալը (լինի դա տեսաձայնագրվող թե առերես): Դուք և Ձեր ներկայացուցիչը, եթե ունեք այդպիսին, պետք է ներկայանաք լսմանը և բացատրեք Ձեր դեպքը:

Եթե Դուք ի վիճակի չեք ներկայանալու լսմանը, կամ չունեք դա անելու ցանկություն, Դուք պետք է այդ մասին մեզ գրավոր տեղեկացնեք որքան հնարավո է սեղմ ժամկետում: Եթե Վարչարարական հարցերով դատավորը համոզված չլինի, որ Ձեր ներկայությունը անհրաժեշտ է Ձեր գործով որոշում կայացնելու համար, և չպահանջի Ձեր ներկայությունը, ապա Դուք ստիպված չեք լինի ներկայանալ: Կամ հնարավոր է մենք փորձենք Ձեզ համար որևէ այլ պայմաններ ստեղծել, այն է փոխել Ձեր լսման ժամը կամ վայրը: Դուք պետք է բավականաչափ լուրջ պատճառ ունենաք, որպեսզի մենք Ձեզ համար կազմակերպենք նման փոփոխությունները:

Լսումից հետո, դատավորը կկայացնի իր որոշումը՝ հիմնվելով Ձեր գործում առկա ողջ տեղեկատվության վրա, ներառյալ որևէ նոր տեղեկատվություն, որը Դուք կտրամադրեք: Մենք Ձեզ կուղարկենք նամակ և դատավորի որոշման պատճեն:

(շրջել)

Վերաքննիչ Խորհուրդի վերանայում՝

Եթե Դուք չեք համաձայնվում դատական լսման որոշման հետ, ապա Դուք կարող եք խնդրել Սոցիալական Ապահովության Վերաքննիչ Խորհրդի կողմից վերանայումը: Վերաքննիչ Խորհուրդը դիտարկում է վերանյման բոլոր հայցերը, սակայն այն կարող է մերժել որևէ հայց, եթե համոզված լինի, որ լսման արդյունքում ճիշտ որոշում է կայացվել: Եթե Վերաքննիչ Խորհուրդը որոշի վերանայել Ձեր գործը, այն Ձեր գործով որոշումը կկայացնի կամ իր հայեցողությամբ կամ կվերադարձնի Վարչարարական հարցերով դատավորին այն հետագա վերանայման:

Եթե Վերաքննիչ Խորհուրդը մերժում է Ձեր վերանայման հայցը, մենք Ձեզ նամակ կուղարկենք մերժման պատճառաբանությամբ: Եթե Վերաքննիչ Խորհուրդը վերանայի Ձեր գործը և իր հայեցողությամբ որոշում կայացնի, ապա մենք Ձեզ կուղարկենք այդ որոշման պատճեն: Եթե Վերաքննիչ Խորհուրդը վերադարձնի Ձեր գործը Վարչարարական հարցերով դատավորին, ապա մենք Ձեզ կուղարկենք նամակը և հրամանի պատճեն:

Դաշնային դատարան՝

Եթե Դուք չեք համաձայնվում Վերաքննիչ Խորհրդի որոշման հետ, կամ եթե Վերաքննիչ Խորհուրդը որոշում է չվերանայել Ձեր գործը, ապա Դուք կարող եք վարույթ հարուցել դաշնային շրջանային դատարանում: Վերաքննիչ Խորհրդի գործողության վերաբերյալ Ձեզ ուղարկված նամակում նաև կնկարագրվի, թե ինչպես կարող եք խնդրել դատարանին դիտարկելու Ձեր գործը:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: